

ԻՐՍԱ ՍԻԳՈՒՐԴԱՐԴՈՏԻՐ

ՅԵՏՄԱՅՈՒ ՎՐԵԺ

Թարգմանիչ՝ Ալեքսանդր Աղաբեկյան



Գ Ի Տ Ա Ն Ք

Երևան 2015

This book has been translated
with the financial support from



MIDSTÖÐ ÍSLENSKRA BÓKMENNTA
ICELANDIC LITERATURE CENTER

Yrsa Sigurdardóttir, *Priðja táknið* (Last Rituals)

Սիգուրդարդոտիր, Իրսա

Հետմահու վրեժ - Եր.: Գիտանք, 2015, 332 էջ.

Հայտնաբերվել է ուսանողի սաստիկ խեղճած մարմինը: Մարդասպանը հանել է մեռածի աչքերը և խորհրդանշան է փորագրել մաշկին: Սպանվածի ընտանիքի համձնարարությամբ՝ փաստաբան Թորա Գուդմունդսդոտիրը և նախկին ոստիկան Մաթյու Ռայխը պարզում են, որ սպանվածը մի խորհրդավոր խմբի անդամ է, որը հրապուրված է միջնադարի կտտանքների ու կախարդության պատմությամբ:

Այս քրեավեպը, ինչպես և հյուսիսային երկրների գրողների մյուս գործերը, պարզունակ դետեկտիվ չէ: Հարուստ է ազգային և պատմական բացահայտումներով Իսլանդիայի մասին: Ոճով նման է Դան Բրաունի և Ումբերտո Էկոյի վեպերին: Մեր օրերին կատարվող, բայց պատմական հիմք ունեցող վեպ է՝ սպանությունով, միջնադարի իրադարձություններով և Հավատաքննության վիուկաորսով: Եվ գործողության սրընթաց զարգացումով:

Իսլանդիայի քրեավեպի թիվ մեկ կին հեղինակ՝ Իրսա Սիգուրդարդոտիրը աշխարհի հայտնի հեղինակներից է՝ Ստիգ Լարսոնի, Յո Նեսբոյի, Արլանդուր Ինդրիդասոնի, Վիկտոր Օլաֆսոնի, Կարին Ֆոսուսի, Լենա Լեհտոլայնենի, Անա Գրուի և Յուսի Ադլեր-Օլսենի կողքին: Իրսա Սիգուրդարդոտիրը 10 վեպի հեղինակ է, որոնք թարգմանվել են ավելի քան 40 լեզվով:

ISBN 978-9939-810-28-7

Copyright © Yrsa Sigurdardóttir 2005

Published by agreement with Solomonsson Agency

© *Գիտանք*, հայերեն թարգմանության և ձևավորման համար, 2015

Հատկապես երախտապարտ են Հարալդ Շմիտին՝ իր անունը հերոսիս փոխ տալու... և նրան սպանելու թույլտվության համար

ՆԱԽԱԲԱՆ

31 հոկտեմբերի, 2005

Գլխավոր պարետ Թրիգվին կանգնած էր սրճեփի մոտ: Համալսարանի պատմության բաժնի ամայի շենքում լոկ լսվում էր սրճեփից ծորող ջրի ձայնը: Շուտով հայտնվելու էին աղմկոտ մաքրուհիները և բլբլալով ու հռռալով հանելու էին իրենց սայլակներն ու փոշեկուլները օժանդակ սենյակից: Պարետը վայելում էր լռությունը և սրճի բուրմունքը: Երեսուն տարուց ավելի նա աշխատում էր համալսարանում և ականատեսն էր բազում փոփոխությունների, որոնցից ամենակարևորը վերաբերում էր իրեն ենթակա մաքրուհիներին: Սկզբում նրանք իսլանդացի էին և հասկանում էին նրա յուրաքանչյուր բառը. այժմ ենթակաների հետ նա շփվում էր ձեռքի շարժումների և հստակ արտասանվող հատուկներն բառերի միջոցով: Բոլոր կանայք՝ բացառությամբ մի աֆրիկուհու, վերջերս էին ժամանել Հարավարևելյան Ասիայից: Առավոտյան՝ նախքան դասախոսների և ուսանողների գալու պահը, նրան թվում էր, թե ինքը աշխատում է Բանգկոկում:

Ձեռքն առնելով գոլորշապատ բաժակը՝ Թրիգվին մոտեցավ լուսանուտին, բարձրացրեց շերտավարագույրը և դուրս նայեց՝ մի մեծ կում թունդ սուրճ խմելով: Համալսարանի տարածքը ձյունածածկ էր: Ճերմակ ծածկույթը պսպղում էր արտասովոր ցածր ջերմաստիճանից. ասես ինչ-որ մեկը գիշերը փայլ էր շաղ տվել գետնին: Խլացնող ձյունը ուժեղացնում էր կատարյալ լռության զգացողությունը: Թրիգվին հաճույքով հիշեց, որ մոտենում է Սուրբ ծննդի տոնը:

Մի ինքնաշարժ մտավ կայանատեղ: Ծննդյան տոնի մասին հիշելու ժամանակը չէ, մտածեց պարետը: Ինքնաշարժը զգուշորեն

շարժվում էր դատարկ տարածքով, ինչը տարօրինակ էր, քանի որ այդտեղ ո՛չ ուրիշ ինքնաշարժ կար, ո՛չ էլ նման զգուշության ակներև պատճառ:

Վարորդը դուրս եկավ ինքնաշարժից և փակեց դուռը: Փակ լուսանուտի միջով թրիգվին լսեց ինքնաշարժի հեռակառավարվող փականքի խլացված ազդանշանը: Տղամարդը քայլեց դեպի շենքը: Թրիգվին իջեցրեց շերտավարագույրը և լրիվ խմեց իր սուրճը: Երբ տղամարդը ներս էր մտնում, շենքի ներսից լսվեց բաժնի մուտքի դռան բացվելու ձայնը: Թրիգվին գործ էր ունենում բաժնի ամբողջ անձնակազմի՝ ուսուցչապետների, դասախոսների և քարտուղարների հետ. նրանցից ամենատհաճ անձնավորությունը Գունար անունով այդ մարդն էր: Նա փնթփնթան էր, միշտ դժգոհում էր մաքրման ծառայությունից և վերևից էր նայում թրիգվինին, ինչը նրան նվաստացնում էր և տհաճություն էր պատճառում: Ուսումնական տարվա սկզբին Գունարը մեղադրել էր մաքրուհիներին, որոնք իբր գողացել էին նրա հողվածը իռլանդացի վանականների մասին՝ Իսլանդիայում վիկինգների բնակեցումից առաջ: Այդ պահից ի վեր թրիգվին ոչ թե հակակրում էր, այլ պարզապես ասում էր Գունարին: Ինչո՞ւ պետք է ասիացի մաքրուհին, որը ի վիճակի չէ իսլանդերեն կարդալ նույնիսկ սեփական անունը, գողանա ինչ-որ դժվարիմաց հողված իռլանդացի վանականների մասին: Թրիգվինի կարծիքով՝ դա հարձակում էր թույլ մարդկանց վրա, որոնք անկարող են պաշտպանվել:

Թրիգվին ցնցված էր, երբ Գունարին նշանակեցին պատմության բաժնի ղեկավար: Նա արդեն խոսել էր թրիգվինի հետ զանազան բարեփոխումների մասին, որոնցից մեկը պահանջում էր, որ մաքրուհիները լուռ կատարեն իրենց գործը: Թրիգվին ուզեց ասել, որ կանանց բլբլոցը ոչ ոքի չի խանգարում, քանի որ աշխատանքի մեծ մասը նրանք կատարում են այն ժամանակ, երբ շենքում մարդ չկա՝ բոլորի գալուց առաջ կամ գնալուց հետո: Բացառությամբ Գունարի, իհարկե: Ամեն առավոտ, անգամ հանրակառքերի աշխատելուց առաջ, նա հայտնվում էր համալսարանում. թե ինչո՞ւ, թրիգվին ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ:

Ձայների ծվլոցը ազդարարեց կանանց ժամանումը: Նրանք հավաքվեցին սրճի փոքր սենյակում և կոտրտված իսլանդերենով բարև տվեցին, ինչին հետևեց նրանց մշտական հռռոցը: Թրիգվին ականա ժպտաց: Յետո նրանց թոհուբոհի աղմուկի միջով մի տարօրինակ ձայն լսվեց շենքի ներսից: Կոկորդային տնքոց էր՝ սկզբում ցածր, իսկ հետո ավելի ու ավելի ուժեղ: Թրիգվին լռեցրեց կանանց ու ականջ դրեց: Մաքրուհիները նույնպես լսեցին ձայնը և աչքերը չռեցին: Երկուսը խաչակնքվեցին: Թրիգվին ցած դրեց սրճի բաժակը և դուրս շտապեց սենյակից. կանայք կրնկակոխ հետևեցին նրան:

Երբ Թրիգվին դուրս եկավ միջանցք, տնքոցը վերածվեց ոռնոցի: Դժվար էր որոշել, թե ում է պատկանում ձայնը՝ տղամարդո՞ւ, թե՞ կնոջ. նա նույնիսկ համոզված չէր, թե մարդու ձայն է: Գուցե կենդանի՞ է մտել շենքը և ինչ-որ կերպ վնասե՞լ է իրեն: Այդ ոռնոցին հանկարծ միացավ ինչ-որ բանի ընկնելու և ջարդվելու ձայնը: Թրիգվին ավելի արագ քայլեց միջանցքով: Ձայնը գալիս էր վերևի հարկից: Նա սամոուդքով վեր վազեց՝ մեկեն երկու աստիճան հաղթահարելով: Կանայք դեռ հետևում էին Թրիգվինին և նույնպես սկսեցին ճչալ՝ նյարդայնացնելով նրան:

Վերին հարկում բաժնի աշխատասենյակներն էին: Յետևում հնչող ճիչերը խանգարում էին, բայց Թրիգվին կարողացավ որոշել, որ գոռոցը գալիս է այդ հարկից: Նա վազեց. մաքրուհիները հետ չէին մնում նրանից: Թրիգվին բաց արեց հարկի միջանցք տանող հրշեջ ելքի դուռը և կտրուկ կանգ առավ. ճչացող կանանց խումբը բախվեց նրան:

Թրիգվին քարացավ տեղում. սակայն դրա պատճառը շրջված գրապահարանը չէր, ոչ էլ միջանցքով մեկ սփռված գրքերին խելակորույս, չորեքթաթ սողացող բաժնի ղեկավարը: Միջանցքում՝ մի փոքր հեռու, երեսնիվեր պառկած մարմին կար, որը դուրս էր ցցվել որմնախորշի սենյակից, որտեղ տեղադրված էր հարկի տպիչը: Թրիգվինի ստամոքսը ջրակծկվեց: Աստված իմ, այդ ի՞նչ լաթեր են նրա աչքերին: Իսկ ձեռքերը. ի՞նչ տարօրինակ դիրք ունեն: Մաքրուհիները ծիկրակեցին Թրիգվինի հետևից, և նրանց ճի-

չերը սաստկացան: Կանայք կառչեցին նրա վերնաշապկին՝ տաբատի տակից դուրս հանելով: Փորձեց գալարվելով ազատվել նրանց ճանկերից, բայց ապարդյուն: Դեկանը նրան մեկնեց ձեռքերը՝ օգնություն խնդրելով և հուսահատորեն փորձելով ազատվել իր հետևի նողկալի տեսարանից: Թրիգվին մի պահ ցանկացավ հավաքել կանանց ու փախչել, բայց զսպեց իրեն: Մի քայլ առաջ գնաց: Ականջ ծակելով՝ կանայք նորից ճչացին: Փորձեցին նրան հետ քաշել, բայց Թրիգվին կարողացավ ազատվել և մոտենալ ոռնացող Գունարին:

Ուսուցչապետի բերանից թուք էր վազում, և այդտեղից լսվող մռթմռթոցը անհնար էր հասկանալ: Կռահելով՝ Թրիգվին ենթադրեց, որ մարմինը (որը անկասկած դիակ էր. ոչ մի ողջ արարած չէր կարող նման տեսք ունենալ) ընկել էր Գունարի գլխին, երբ նա բացել էր տալիչի սենյակի դուռը: Նա ականա սևեռվեց մարդու զարհուրելի մնացորդներին: Սև լաթերը աչքերին իրականում լաթեր չէին: Թրիգվիի ստամոքսը կծկվեց: Աստված իմ, մտածեց նա: Ստամոքսի կծիկը ավելի սեղմվեց, և Թրիգվին փսխեց: